

ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Հայաստանի համար շուտով մեծ վտանգ եւ պատիժ է սպասում, ինչպէս դա տեղի ունեցաւ 1988 Դեկտեմբեր 7ին Լենինականում եւ նրա շրջակայում, որովհետեւ Աստուծոյ բարկութիւնը դարձեալ բորբոքուած է հայ ժողովրդի վրայ, մեր գործած չարութիւնների եւ պղծութիւնների պատճառով: Սաղ. ԺԹ. 9. «Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան կը մնայ: Տէրոջը դատաստանները նշմարիտ ու բոլորովին արդար են»: 1988թ. Նոյեմբերի վերջերին եւ Դեկտեմբերի սկզբին, կինս եւ կնոջս մայրը գնացել էին Լենինական, մտան «Ս. Աստուածածին» եկեղեցին մոմ վառեցին, աղօթեցին եւ դուրս եկան: Կինս եւ մայրը մտան խանութ, իսկ ես դուրսը կանգնած դիտում էի հրապարակում գտնուող «Ս. Ամենափրկիչ» եկեղեցին եւ մտիս մէջ ինձ ու ինձ խօսում, որ մեր հայ ժողովուրդը շատ է չարացել եւ մեծ մեղք է գործում Աստուծոյ առջեւ, երկար տարիներ ցուցադրելով, որ «Ս. Ամենափրկիչ» եկեղեցին իբրեւ թէ վերանորոգում են, դրսից տախտակներ եւ գերաններ կանգնեցնելով, իսկ ներսում՝ հիմնարկութիւն, պահեստ եւ այլ, եւ այլ բաներ են անում: Մտիս մէջ ասում էի. «Դրսից մարդկանց են խաբում, իսկ ներսից ուզում են Աստուծոյ խաբել, սակայն չեն իմանում, որ Աստուած ծաղր չի լինի եւ նա ամէն ինչ տեսնում է եւ մեզ սարսափելի ձեւով կը պատժի:» Այդ վայրկեանին մի հրեշտակ շատ փայլուն ձայնով խօսեց ականջիս մէջ ասելով. «Դու, որ քիչ առաջ ջերմեռանդօրէն աղօթեցիր «Ս. Աստուածածին» եկեղեցիի մէջ, այդ եկեղեցին պիտի չփանգուի, հաստատ պիտի մնայ եւ նշանի համար միայն գմբէթը պիտի ձափի:»

Եւ նոյն ակնթարթում մի ուժեղ աղմուկի ձայն լսեցի, որ ականջս խլացնում էր, որը խօսքով հնարաւոր չէ բացատրել, եւ ես սարսափահար ու ցնցուած մի քանի քայլ առաջ գնացի ու հասկացայ, որ երկրաշարժ պիտի տեղի ունենայ:

Ամուսնու Գ. 6-8 «Միթէ փաղափին մէջ չարիք մը կ'ըլլա՞»,

Եթէ Տէրը զանկալ ըրած չէ:»

Յիրաւի Տէր Եհովան բան մը չըներ, մինչեւ իր գաղտնիքը իր ծառաներուն, մարգարէներուն, չյայտնէ: Առիւծը մոնչեց, ո՞վ պիտի չվախնայ:

«Տէր Եհովան խօսեցաւ, ո՞վ պիտի չմարգարէանայ:»

Եւ ես՝ մեղաւորների մեղաւորս հասկանալով, որ «Ս. Ամենափրկիչ» եկեղեցին պիտի փանգուի, որոշեցի գնալ այնտեղ էլ աղօթել, յոյսով, որ Աստուած ներող եւ ողորմող է, եւ այդ եկեղեցին էլ թող չփանգուի: Զոհանջ մայրիկս ասաց. «Տղա՛ս, մենք շատ-շատ անգամներ եկել ենք այստեղ եւ դու խնդրել ես, որ ներս մտնենք աղօթելու համար, բայց ոչ մի անգամ թոյլ տուած չեն. հիմա ինչո՞ւ կ'ուզես, որ քեզ դարձեալ նեղացնեն ու մերժեն»: Ես ասացի. դուք գնացէ՛ք մեքենայի մէջ նստէ՛ք, իսկ ես վերջին անգամ լինելով խնդրելու եմ, որ ներս մտնեմ: Եւ գնացի «Ս. Ամենափրկիչ» եկեղեցիի դուռը բացի: Հիշտ դրան առջեւ մի սեղան կար եւ սեղանի մօտ նստած էր արտափնով գեղեցիկ մի աղջիկ: Խնդրեցի նրան, որ ինձ թոյլ տայ ներս մտնել: Բայց նա ինձ մերժեց եւ ասաց. «Այստեղ հիմնարկութիւն է»: Ես դարձեալ խնդրեցի եւ ասացի. «Իմ ցանկութիւնը մինչեւ խորանը գնալ եւ ետ վերադառնալ է, դու էլ հետս արի: Ես ոչ մի բանի ձեռք չեմ տայ, եւ քեզ որեւէ հարցում չեմ տայ, միայն մինչեւ խորանը

գնամ եւ ետ վերադառնամ»։ որովհետեւ մտիւս մէջ ասում էի, եթէ ներս մտնեմ, այդ ժամանակահատուածում կ'աղօթեմ քարճեալն Աստուծուն եւ կը խնդրեմ, որ այս եկեղեցին էլ թող պահպանուի։ Եւ նա ասաց. «Կ'ուզե՞ս խորանը տեսնել, անհնարին է։» Եւ հահ-հահ ծիծաղելով ասաց. «այստեղ հիմնարկութիւն է, չե՞ս հասկանար»։ Եւ դուրս ելայ։ Եկեղեցու առջեւ դէպի վեր նայելով ասացի. «Ամենակալ Զօրաց Տէր Աստուած, արդար եւ Դու քո վնդիդ մէջ, որովհետեւ սրանք պղծում են քո սուրբ եկեղեցին։» Եւ յիրաւի, օրհնեալ լինի Աստուծոյ անունը, իր հրեշտակը ինչպէս խօսել էր, շուտով նոյնութեամբ կատարուեց։ Եւ շատ ցաւում եմ այն հազարաւոր անմեղ մարդկանց համար, ովքեր գոհուեցին, եւ այն հազարաւոր անձանց համար ովքեր դարձան հաշմանդամ, որք, անտուն եւ թափառական, մեր գործած չարութիւնների, մեղքերի եւ պղծութիւնների պատճառով։

Աստուած ինչպէս Իսրայէլի ժողովրդին պատժեց իր սրբարանը պղծելու եւ իրենից հեռանալու համար, նոյն պատժին եւ մեզ արժանացրեց. եւ երկրաշարժի գլխաւոր պատճառը՝ «Ս. Ամենափրկիչ» եկեղեցիի պղծուելն է։ Ըստ Եզեկիէլ մարգարէի, Տէրն ասաց՝ պատիժներն «Իմ սրբարանիցն սկսեցէք»։ Կարդացէ՛ք Եզեկ. Գլ. Ը եւ Թ։ Անցել է մօտ տաս տարի, քայքայող ահաւոր երկրաշարժի վերջերը դեռ չեն ապաքինուել։ Սակայն մենք նոյն ենք մնացել, չենք խրատուել եւ դեռ մեր Ամենակալ ու Ամենափրկիչ Աստուծուն չենք դարձել։ Մեր մեծ մարգարէ Ս. Գրիգոր Նարեկացին, դարեր առաջ մարգարէանալով մեր հայ ժողովրդի ներկայ վիճակի համար գրել է.

«Եւ արդ, ինչպէս որ մի իմաստասէրի չիմացուած մահը չարիք համարել թուաց, իսկ որ ճիշտ,

Եւ էլ իմ խօսքով հաստատում եմ այդ.

Քանզի անգգայ անասունների պէս մեռնում ենք ու չենք զարհուրում

Կորչում ենք՝ ու չենք սարսափում,

Թաղում ենք՝ ու չենք տագնապում,

Նդուում ենք՝ ու չենք զղջում,

Մաշում ենք՝ ու չենք հասկանում,

Պակասում ենք՝ ու չենք վերալրում,

Քայլում ենք՝ ու չենք զգուշանում,

Գերում ենք՝ ու չենք զգում։»

(Բան ԾԵ, գ, 50-55)

Եւ՝ մեղաւորների մեղաւորս, Աստուծոյ ծառայ՝ յայտարարում եմ, որ շուտով մեծ պատիժ է սպասւում Աստուծոյ կողմից Նրեւանին եւ նրա շրջակային։ Գլխաւոր պատճառը այս անգամ՝ Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին է, որը կոմունիստները (սատանայի մարմնաւոր ծառաները) քանդեցին եւ տեղը կինո «մոսկվան» կառուցեցին, տարիներ շարունակ այնտեղ գանազան շարժանկարներ ցուցադրելով։ Սակայն երբ անկախութիւն ձեռք բերեցինք, ոչ մի բան դէպի բարին չդարձաւ։ Ընդհակառակն աւելի ու աւելի աւելացան բացէ ի բաց սէքս՝ շարժանկարների ցուցադրումը, եւ դրան գումարած դեռ ուզում են շուտով այդ սուրբ հողի վրայ տեսակ-տեսակ պղծութիւններ եւ «շուռներ» կազմակերպել։ Շատերը մոռացել են անգամ, որ այդ տեղում ժամանակին եկեղեցի է եղել։

Ո՛վ Հայաստանի անկախ կառավարութիւն, խորհրդային կայսրութիւնը փլուզուելուց յետոյ, ինչ որ նրանց էր պատկանում՝ խորհրդարանի շէնքը, գերագոյն խորհրդի շէնքը, կոմկուսի շէնքը եւ այլն, եւ այլն, ինքնաքերաքար անցաւ անկախ կառավարութեանը։ Իսկ ինչո՞ւ եկեղեցու ունեցածը եկեղեցուն չէ՛ք յանձնում, սկսած Ս. Պօղոս Պետրոս եկեղեցուց, որովհետեւ այդ տեղը սուրբ հող է եւ ոչ մի եկեղեցի պատահականօրէն չէ կառուցուած։ Ինչպէս ասել է Ս.

Երանոսը. «Ուր եկեղեցին է, այնտեղ էլ Աստուծոյ հոգին է: Ուր Աստուծոյ հոգին է, այնտեղ էլ եկեղեցին է»: Երբ Յիսուս Քրիստոսին հարցրին. (Ղուկ. Ի 22-25) Արժա՞ն է մեզ Կայսրին հարկ տալ թէ ոչ: Յիսուս պատասխանեց. «Կայսրինը տուէ՛ք Կայսրին, Աստուծունը՝ Աստուծուն»: Հիմա դուք Կայսրինը վերցրեցիք. շատ բնական է եւ ճիշտ է: Իսկ ինչո՞ւ Աստուծունը չէ՛ք տալիս Աստուծուն: Անյապաղ կանգնեցրէ՛ք պոռնկական եւ ամէն տեսակ պիղծ շարժանկարների ու «շոունների» ցուցադրումը այնտեղ, որպէս զի օր առաջ Աստուծոյ բարկութիւնը մեղմանայ եւ գալիք պատիժը մեր ժողովրդից հեռանայ: Եւ կինօ «Մոսկվան» իր ամառային եւ ձմեռային բոլոր սրահներով, շուրջի խանութներով. մի խօսքով՝ ամբողջութեամբ, յանձնէ՛ք էջմիածնի տնօրինութեանը: Եւ ինչ որ կոմունիստների գալուց առաջ պատկանում էր եկեղեցուն, դրէ՛ք էջմիածնի եւ Վեհափառ Հայրապետի հսկողութեան տակ: Եւ Հայաստանում գտնւող շատ-շատ եկեղեցիներ, որոնք գտնւում են անմխիթար վիճակում, ամբողջ հայ ժողովուրդս պէտք է Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ, որը շատ-շատ մօտ է, մաքրենք եւ վերականգնենք մեր կարողութեան ամբողջ հնարաւորութեամբ: Ինչպէս ասում է մեր Ս. Գրիգոր Նարեկացին, (Բան Բ. ա.) «Քանզի մարմնաւոր շուրթերով,

ահա, ուղերձ եմ կարդում բարձրեալ Աստուծուն, Որ գործերով է գրաւում միայն եւ չի կաշառում բանաստեղծութեամբ»: Իսկ եթէ ասենք, դեռ ժամանակը չէ եկել Տէրոջը տունը շինելու, Աստուած այսպէս ասաց հրեաներին, Անգէ մարգարէի միջոցով. «Ձեզ համար ժամանա՞կն է արդեօք, որ դուք, ձեզուցազարդ տներում բնակուէ՛ք, իսկ այս տունը աւերակ մնայ» (Անգ Ա Յ): Սիրելի հայ ժողովուրդ եկէ՛ք բոլորս օր առաջ մեր բարի գործերով ծառայենք մեր ամենակալ Աստուծուն ապաշխարհենք եւ ամբողջ հոգով դառնանք նրան, որպէս զի նա էլ դառնայ դէպի մեզ: Զաքարիա Ա. Յ.- «Այսպէս է ասում Զօրաց Տէրը. Դէպի ինձ դարձէ՛ք, ասում է Զօրաց Տէրը, եւ ես էլ դէպի ձեզ կը դառնամ, ասում է Զօրաց Տէրը»:

Ես, որ վկայում եմ այս բոլորի մասին, զուտ նշմարութիւն է: Եթէ ինձ չէ՛ք հաւատում, Տէրոջը կամքով պատրաստ եմ «Ս. Աստուածածին» եկեղեցու գմբէթի տակ երգուել, որ իմ վկայութիւնը նշմարիտ է, եւ ոչ մի մարդ Սուրբ Հոգու անունով սուտ չի կարող խօսել, ինչպէս դա պատահեց Անանիայի եւ Սափիրայի հետ: Կարդացէ՛ք Գործք Առաքելոց Եւ-11 գլուխը: Ես, որ Երեւանի մշտական բնակիչ եմ, այժմ ժամանակաւորապէս բնակւում եմ Բուրգաս ֆաղափում:

ԳԼՈՐԳ ՔԷՇԻՇԵԱՆ